ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5689-Ա « 23 » նոյեմբերի 2026թ.

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետն ու նույն հոդվածի 2-րդ մասը.

1. Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում կառուցված և Երևանի քաղաքապետի որոշմամբ չօրինականացված ինքնակամ շինությունների կամ օրինական շինություններին կից ինքնակամ կառուցված և քաղաքապետի որոշմամբ չօրինականացված հատվածների, այդ թվում՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերում, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի, քանդման (ապամոնտաժման) և նախկին վիճակի վերականգնման պահանջներ ներկայացնելու լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Սամվել Էդուարդի Ղուկասյանին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի տեղակալներ Ռուբեն Էդիկի Խոջայանին, Գևորգ Աշոտի Ավոյանին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային առաջին բաժնի պետ Ասատուր Աշոտի Համբարձումյանին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության երկրորդ տարածքային բաժնի պետ Արթուր Ռազմիկի Հովսեփյանին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության երրորդ տարածքային բաժնի պետ Հայկ Վաչագանի Սաֆարյանին:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 